

Ազգային Հիփոթեքային Ընկերություն /ԱՀԸ/ ՈԻՎԿ ՓԲԸ - ի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում բնակելի անշարժ գույքի ձեռք բերման համար տրամադրվող վարկ

Նպատակային նշանակություն	Առաջնային կամ երկրորդային շուկայից բնակելի անշարժ գույքի ձեռքբերում:	
Հնարավոր վարկառուներ և համավարկառուներ	Կայուն եկամուտ ունեցող ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ ֆիզիկական անձ:	
Վարկի նվազագույն և առավելագույն գումարը	A	B
	5,000,000 – 25,000,000 ՀՀ դրամ	5,000,000 – 25,000,000 ՀՀ դրամ
Նվազագույն կանխավճար	30% կամ 10%+ հավելյալ գրավ /անշարժ գույք/	40% կամ 10%+ հավելյալ գրավ /անշարժ գույք/
Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Վարկի նվազագույն և առավելագույն ժամկետը	A	B
	120 - 180 ամիս	120 - 144 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	11.5%	11.5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	12.67% - 13. 67%	12.73% - 13. 67%

Ուշադրություն՝ վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում եւ չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող էք գտնել [այստեղ](#): Վարկային պայմանագրի գործողության ընթացքում Բանկի կողմից անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում, եթե վարկառուն չի խախտում պայմանագրով սահմանված պայմանները:

Ուշադրություն՝ Այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել բանկի կողմից վարկային պայմանագրի գործողության ընթացքում, եթե վարկառուն խախտի պայմանագրով սահմանված պայմանները:

Փոփոխման սահմանաչափերն են՝ 1-5%

Պարտադիր վճարման ենթակա վճարներ	Միջնորդավճար՝ 85000 ՀՀ դրամ (այդ թվում՝ Վարկի տրամադրման համար՝ 80,000 ՀՀ դրամ: Վարկային հայտի ուսումնասիրման համար՝ 5 000 ՀՀ դրամ:)	
Վարկի տրամադրման կարգը	Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:	
Վարկի մարման կարգը	Ամենամսյա անուիտետային մարումներ:	
Վաղաժամկետ մարման հնարավորությունը	Թույլատրվում է առանց տույժերի:	
Տույժեր	Ժամկետանց վարկ	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով

	Ժամկետանց տոկոս	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով
<p><i>Զգուշացում` Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր տոկոսագումարների և վարկի գումարների մարումները:</i></p> <p><i>Ուշադրություն` Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը: Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ ապագայում վարկ ստանալու համար:</i></p> <p><i>Վարկային պարտավորությունների չկատարման և գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում, վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու պարագայում, հնարավոր է պատավորությունների մարում վարկառուի այլ գույքի հաշվին:</i></p>		
Ապահովվածություն	Գրավ	Ձեռք բերվող անշարժ գույքը
	Երրորդ անձի երաշխավորություն	Չի հանդիսանում պարտադիր Նպատակահարմարությունը որոշվում է հայտի հաստատման ընթացքում
<p>Ձեռքբերվող գույքը գնահատվում և ապահովագրվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից /ցանկը տես այստեղ/:</p> <p>Օժանդակ ծառայություններից օգտվելու գնային միջակայքը հետևյալն է`</p> <ul style="list-style-type: none"> • գույքի գնահատում` 15.000 ՀՀ դրամ • գույքի ապահովագրություն` 0.22% գնահատված արժեքից կամ վարկի գումարից /հաճախորդի ցանկությամբ/ • անձնական ապահովագրություն` 0.17% վարկի գումարից • նոտարական ծառայությունների վճար` 15 000- 20 000, ներառյալ ամուսնության վերաբերյալ հայտարարությունների համաձայնագրերը • գույքի պետական գրանցման վճար` 72 400 ՀՀ դրամ 		
Վարկ հարաբերած գրավի արժեք	առավելագույնը 70%	
Գրավի գնահատում	Պարտադիր, լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից: Իրականացվում է վարկառուի միջոցներով:	
Ապահովագրություն	Գույքային	պարտադիր` գույքի ամբողջ արժեքով
	Անձնական /դժբախտ պատահարներից/	պարտադիր` վարկի գումարի չափով
Գրավին ներկայացվող պահանջներ	1. Բնակարան Բնակարանը պետք է ունենա բարձր լիկվիդայնություն (ավարտված	

նորակառույց կամ բարձր լիկվիդայնություն ունեցող ռեզիդենտ Երևանում, ցանկալի է վերանորոգված): Վարկերը չեն տրամադրվում բարձր մաշվածության աստիճան ունեցող շենքերին (խրուշովյան, կասետային, հին և այլ շենքեր):

2. Բնակելի տուն

Բնակելի տունը պետք է ունենա առանձնացված մուտք և հողակտոր:
Բնակելի տունը չպետք է ունենա ընդհանուր պատեր հարևանների հետ, մակերեսը պետք է լինի նվազագույնը 100 քմ, հողակտորի մակերեսը պետք է լինի նվազագույնը 200 քմ:

Սպառողի համար վարկի հասանելիությունը սահմանափակող այլ պայմաններ չկան: Վարկը ձևակերպվում է բանկում՝ մասնաճյուղերում:

Վարկի տրամադրման դրական գործոններն են հաճախորդի վարկունակությունը, դրական վարկային պատմության առկայությունը, գրավի առարկայի որակը և այլն:

Վարկի մերժման գործոններն են հաճախորդի եկամուտների անբավարար լինելը, բացասական վարկային պատմության առկայությունը, ներկայացված տեղեկատվության կամ փաստաթղթային փաթեթի թերի կամ անարժանահավատ լինելը և այլն:

Պայմանագրի գործողության ընթացքում քաղվացքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները տես [«Սակագներ»](#) բաժնում: